ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2021 թվականի N 14

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. Մ.ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 62Ա ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ Ստեփանավան քաղաքի Մ.Բաղրամյան փողոց թիվ 62ա հասցեի անշարժ գույքի ընդհանուր համատեղ սեփականատերեր Մարիետտա Նիկոլայի Բաշոյանի և Կոլյա Լևոնի Բաշոյանի կողմից ներկայացված համատեղ դիմումը, հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի ճշտելու վերաբերյալ, 10.11.2009թ. թիվ 2486617 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը, համայնքապետարանի կողմից տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերը, Ստեփանավան քաղաքային համայնքի 2013թ. հաստատված գլխավոր հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան Մ.Բաղրամյան փողոց թիվ 62ա հասցեի հողամասի սահմանային չափերը և մակերեսը համաձայն «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի, որի մակերեսը կազմում է 0.0137 հա, նախկինում թիվ 2486617 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականով պետական գրանցում ստացած 0.0141 հա մակերեսի փոխարեն:
2. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան Մ.Բաղրամյան փողոց թիվ 62ա հասցեի 0.0137 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համաձայն քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություններ

կատարելու մասին 2013 թվականին հաստատված Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագծի, փոխադրել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի ֆոնդ:

3. Հիմք ընդունելով համայնքապետարանի կողմից տրամադրված քաղաքաշինական փաստաթղթերը վերը նշված անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Մ.Բաղրամյան փողոց թիվ 62/2 առևտրի օբյեկտ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«04» փետրվարի 2021 թվականի N 15

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՐԱՖՖԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 90 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հակոբ Միսակի Ավետիսյանի կողմից 03.02.2021թ. ներկայացված թիվ Ա-73 դիմումը և 29.04.2005թ. թիվ 1245620 անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման վկայականը ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Ռաֆֆի փողոց թիվ 90 հասցեով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին և բնակելի տանը իր օժանդակ շինություններով տրամադրել նոր փոստային հասցե ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Ռաֆֆի փողոց թիվ 104:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» փետրվարի 2021 թվականի N 16

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՊՐՈՄԵԹԵՎՍ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15Ա 1 ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ 1-ԻՆ ՀԱՐԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹԻՎ 1, 47.0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից լիազորված անձ Գարիկ Գառնիկի Ջալինյանի կողմից ներկայացված 03.02.2021թ. թիվ Ջ-71 դիմումը, 25.01.2021թ. «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թիվ 163 լիազորագիրը, 02.02.2021թ. առուվաճառքի պայմանագիրը՝ թիվ 431 գրանցամատյանով գրանցված և 29.07.2005թ. թիվ 1099895 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ 1-ին մասի հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Պրոմեթևս փողոց թիվ 15Ա 1 բնակելի շենքի 1-ին հարկում գտնվող՝ 47.0 քմ մակերեսով բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Պրոմեթևս փողոց թիվ 80/1 շենք թիվ 1 բնակարան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ